

ՊԱՅՄԱՆՔ

ԳՈՒԼԱՐԻԱ

Տարեկան . . 12 Ֆր.

Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍՏԱՄԱՆ

Երկու քիւ լեկ ծառով

Տարեկան . . 14 Ֆր.


Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոլար

Վեցամսեայ 1.50 "

Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Ք Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԵ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրոտիսիք եւ

չեմ տրոտիք

Զ Ե Կ Ո Յ Ց

Արտասահմանի մեր բաժանորդներէն կը խնդրուի որ իրենց յետ նեալ բաժնէքինները անշարժադ զրկեն, եթէ չեն ուզիր որ թերթիս առաջունը գաղթեցնենք և իրենց պարտքերը հրապարակապահանջենք:

ՀԱՅԱՆՊԱՍՏ ՇԱՐԺՈՒՄ ԻՏԱԼԻՈՑ ՄԷՋ

Խտալիոյ գլխաւոր քաղաքն Բէն Ժիոյն, Միլանի մէջ, ապրիլ 7ին տեղի ունեցաւ Թուրքիոյ հարստահարուած ժողովուրդներուն ինպատու գումարում մը, ուր հաւաքուած էին բոլոր կուսակցութեանց պատկանող նշանաւոր անձնաւորութիւններ:

Խորհրդակցութիւնէ մը յետոյ, որուն մասնակցեցան վսեմ Սօնէթան, Բիւսատի և Մալէլի հրապարակադիրները ու Թիւ. ռաթի և Շիէսի երեսփոխանները, հոն բոլոր ատենախօսները իրենց համակրանքը յայտնեցին Հայաստանի և Մակեդոնիոյ համար, ու յայտարարեցին թէ հարկ է որ վերջապէս գործադրուի տրուի Պէւլիին դաշնագիրը. հետեւեալ որոշումը միաձայնութեամբ քուէարկուեցաւ.

Խաղաղութեան և իրաւարարութեան համար կազմուած Լոմպարտիոյ Միութեան նախագահ վսեմ Սօնէթանի հրաւերանք, բոլոր կուսակցութեանց ներկայացուցիչներու ժողովը կորոշէ կազմել յանձնախումբ մը որ պիտի կազմակերպէ իտալիոյ մէջ շարժում մը ի նպատակ բարբարոսութենէ հարստահարուող ժողովրդոց, առաջին անգամ Միլանի մէջ մեծ միթինկ մը գումարելով:

Տիկին Ռափիզա յետոյ քուէարկել տուաւ թէ իտալացի տիկիններն ալ այս ազնիւ հարցին կուգան կցել իրենց զգացումներու բաժինը:

Թանձնախումբը կազմուեցաւ 26 անձնաւորութիւններէ:

Միթինկը տեղի պիտի ունենայ ապրիլ 26ին, Կոմսեր Ծերակոյտի

անդամներ և ուրիշ շատ մը բարձրաստիճան անձնաւորութիւններ նամակներով իրենց ջերմագին համակրանքը յայտնած են:

Ս. հայապէս Խրոնիսայի նման իտալիոյ մէջ ալ երեւելի գրագէտներ, գիտնականներ կը միտնան հակառակ կարծիքներու պատկանող քաղաքական անձնաւորութեանց հետ պաշտպանելու համար միեւնոյն մարդասիրութեան և արդարութեան դատը:

Քաղաքակիրթ աշխարհի մէջ հետզհետէ տարածուող այս հայանպաստ շարժումը մեզ խթան մը ըլլալու է, մանաւանդ մեր յեղափոխականներուն, առաջ խորական ոգիի զիրար գրկելու, և ազգային նուիրական դատը գոտէ պինդ և միացեալ ուժով պաշտպանելու համար:

Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒԹԻՒՆԸ

Հանգուցեալ Մակար կաթողիկոսը Ս. Էջմիածնի տաճարի վեճակը և նրա վերանորոգութեան անհրաժեշտութիւնը տեսնելով, տաճարի վերաշինութեան ձեռնարկեց:

Ինչպէս ամեն գործի համար, փող էր հարկաւոր. բայց Ս. Էջմիածնում փող չկար: Հանգուցեալ կաթողիկոսը կամեցաւ որ ինքը ազգը վերաշինէ իւր Ս. Էջմիածինը: Սկսեց հանգանակութիւն, ստացուած էին գանազան կողմերից նուէրներ: Սօտ 55 հազար ռուբլի փող էր հաւաքուած. բայց վերաշինութեան գործը դեռ չսկսած, Մակար կաթողիկոսը մեռաւ և ստացուած գումարներն ծախսուեցան ուրիշ շինութիւններ: Ի վրայ և պէտքերի համար:

Բարեգործութիւններ անող և եկեղեցիներ շինող մեր Պ. Ալէքսանդր Մանթաշեանին էր վիճակուած երկու կաթողիկոսների պարտք կատարելու և իւր կատարած բարի գործերի վրայ մի նշանաւոր գործ ևս աւելցնելու: Իւր տանը մարտի 26ին, Վահագն հայրապետին մեծարելիս, Պ. Ա. Մանթաշեանը յայտնում է Վահին իւր որոշումը. կատարել Ս. Էջմիածնի տաճարի վերաշինութիւնը իւր ծախսով:

Թաշեանը յայտնում է Վահին իւր որոշումը. կատարել Ս. Էջմիածնի տաճարի վերաշինութիւնը իւր ծախսով:

Վաղեմի միտքը իրականացնելու համար Պ. Ա. Մանթաշեանը 150 հազար ռուբլու գումար է որոշել ծախսելու: Անտարակոյս ինքը կազմել կը տայ վերաշինութեան նախագիծը և հաւատարիմ ու գործին հնուտ մարդիկ նշանակել կը տայ զուլա բերելու այդ նախագիծը:

Անտարակոյս Ս. տաճարից կը հեռացուի այն աւելորդ կտորը, որ կցել է ի տէր հանգուցեալ Գէորգ կաթողիկոսը և որով Ս. Էջմիածնի տաճարը տեղեկացել է և բուն ոճը խանգարուած է: Պէտք է Ս. տաճարը պահպանի իւր հին և գեղեցիկ ձեւը այնպէս, ինչպէս որ կանգնեցրել է սրանից 1600 տարի առաջ մեր հայոց ազգի համար ինքը Ս. Լուսաւորիչը:

Թիֆլիս

ՍՈՒԹԱՆԸ ԵՒ ԱՆՊԱՍՏԻՔ

Մեր ընթերցողները յիշելու են թէ՛ Սիթրովիցայի մէջ ռուսական հիւպատոսարանի մը հաստատումին դէմ իսլամ Ալպանացիք բողոքած և ցոյցեր ըրած էին: Սուլթանը ռուս կառավարութեան պահանջին չկրնալ ընդգիծանալով, ստիպուեցաւ թոյլատրել հիւպատոսարանին հաստատումը. բայց Ալպանացիք աւելի կատեղեցան ու անկարելի եղաւ ժամանակ մը ռուս հիւպատոսին Սիթրովիցա երթալը:

Համիտ երկու կողմին ալ գոհացում տալու խելացի եղանակ մը ընտրեց. այսինքն թէ ռուս հիւպատոսը զինուորական պաշտպանութեամբ Սիթրովիցա զրկեց և թէ նշանաւոր Խոսա Պօլէթիինաց անուն Ալպանացացի պիտը՝ որ փոքր Աօրա աքսորուած էր, աբուսոնց որ իւր երկիրը վերադառնայ: Այս կարգադրութեամբ Ալպանացիք դոհացում մը գտած եղան, որով այլեւս ռուս հիւպատոսին Ս. Զէր.

պիւայի կեանքը վտանգէ գերծ պիտի ըլլար և ազատութիւն պիտի ունենար ռուսական դրօշակը պարզելու կիտի և տօն օրեր:

Սուլթանի այս առերես հաշտարար կարգադրութենէն յետոյ շատ օր չանցաւ և ահա խելօհ հիւպատոսին ալպանացի զինուորէ մը քնդակահար ըլլալը իմացանք և քանի մը օր վերջն ալ մահը:

Աքսորավարէն հայրենիք վերադարձող Խոսա Պօլէթիինաց ալպանացի նշանաւոր պետը այն ատեն Սուլթանի հետ ուշագրաւ տեսակցութիւն մը ունեցեր է, զոր հրատարակած է Շիւնէվ հրատարակուող Ալպանի թերթը, որմէ թարգմանաբար կարտատպենք հետեւեալը:

Հաւիս. — Բարի եկած էք Խոսա պէյ:

Խոսա պէյ. — Թուրքերէն չեմ գիտեր: (Կը պատասխանէ ալպանիէն):

Հաւիս. — (Դառնալով իր սենեկապետին) Թայիւ բաշա հոս կանչէ:

Թայիւ բաշան կուգայ, որ պալատին մէջ ալպանացի դորագուլդին պետն է:

Հաւիս. — Թայիւ բաշա իմ կողմէս Խոսա պէյին բարի եկած էք ըսէ:

Թայիւ բաշան բարեւը կը կրկնէ ալպանիէն:

Հաւիս. — Թայիւ բաշա, հարցուր Խոսա պէյին թէ ի՞նչու համար կեանք վտանգուեցաւ հակառակ է:

Խոսա պէյ. — Բաշա, ըսէք Նորին Վահագնաւորութեան թէ այս կեանքս բաւական էս բան մը չեմ հասկնար. ես կը հասկնամ միայն իսլամ եւ քրիստոնեայ բառերը:

Հաւիս. — Կեանքս ըսելով կը հասկցուի մեր կրօնքին թշնամիներ. բոլոր քրիստոնեաները մեր թշնամիներն են:

Խոսա պէյ. — Մենք Ալպանացիներ ենք, մէկ հայրենիք ունինք որուն ալպանացի բնակչութիւնը կազմուած է երեք կրօնքներէ: Արդ, քրիստոնեայ ալպանացիները ի՞նչպէս մեր թշնամիները կըլլան: Զէ՛ որ Ռուս-թուրք պատերազմի ատենը եւ յետոյ Ալպանացիք առանց խտրութեան կրօնի, դէնք առին թշնամիներու դէմ: Մենք կողակցանք իրարու քով բոլորին դէմ:

Հաւիս. — Զգե՛ք այս անարժէք վէճը. ի՞նչու համար Խոսա պէյ չեզեր որ ռուս հիւպատոսը Սիթրովիցա երթայ:

Խոսա պէյ. — Ռուս հիւպատոսին

խնդիրը բոլորովին քաղաքական խնդիր է։ Մենք Արարչական շինք ուղեր տեսնել յայդ հայրենիքի, Արարչական շինքի մէջ սլուական վառարան մը, ուր մէկ հաս ուն չկայ։ Հիւսիսային Արարչական մէջ, ինչպէս Միթրոփիցա, ուն հիւստոստոսանի մը հաստատումը մեծ խոտովութիւններ յառաջ պիտի բերէ քրիստոնեայ եւ իսլամ Արարչացոյց մէջ։ Ռուսիան կուզէ միշտ խոտովութիւններ հանել Պալատի մէջ եւ երբեք չբաղձար անդորրութեան։

Եթէ նորին Վեհափառութիւնը կուզէ մեզ արարչացոյցի Ռուսիոյ գաղափարներովը որ, կըստ թէ, պիտի գան Միթրոփիցա հիւստոստոսի հետ, Արարչացոյցը կընան զանոնք վառարան եւ պաշտպանի իրենց ազգային իրաւունքները։

Համիտ. — Որ ծիշը չէ։ Կը խնդրեմ Իսսա պէյ, ընդունեցէք միայն հիւստոստ, որպէս զի մոսկովին հետ խնդիր չունենանք։

Իսսա պէյ. — Կընդունինք հիւստոստ մեր վեհափառին կամքը կատարելու համար։ Բայց չենք ուզեր մեր քով տեսնել գաղափար գաղափարներ։ Հիւստոստարանի պահանջները մեր հայրենակիցները ըլլալու են։

Համիտ. — Ետ լաւ, շատ լաւ, շատ լաւ, կը գրենք այժմ ուն զեպանին։ Ետ գոհ եմ ձեզմէ։

Կուզէք որ ձեզ բայա անուանեմ հոս պալատին մէջ, իմ քով, պիտի ունենաք դրամ, սպասարարներ եւն։

Իսսա պէյ. — Ոչ, Վեհափառ, ես կը նախադրեմ մնալ իմ զաւակներու իմ ծնողքին եւ իմ հայրենակիցներու քով պարկեշտօրէն աշխատելով իմ հողերու մէջ, չանկու համար իմ եւ իմ ընտանիքիս ապրուստը։

Հաղար շնորհակալութիւն Ձեր Վեհափառութեան իր խոնարհ ծառային ցոյց տուած այդ վեհափառութեան առթիւ։

Համիտ. — Ձեզմէ կրկին կը խնդրեմ Իսսա պէյ, խոտովութիւն եւ ցոյցներ մի ընէք ունենալու զէմ։ Բարի ճանապարհ, Իսսա պէյ, իմ կողմէ բարեւ խօսեցէք բոլոր իմ Արարչացոյցներու որոնք շատ կը սիրեմ???

Իսսա պէյ խոտ ոխակալ խոնարհութենէ մը վերջ պալատէն մեկնեցաւ։

ՀԱՆՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Հայ յիշափ. կազմակերպութեանց զօրանալուն նախաձեռնութիւնը անհատ մը բլլալով, շատ ցաւ զգացած էր Հնչ. միացեալ կուսակցութեան կեդրոնի մէջ վերջերս պատահած երկուստեան թեան առթիւ։

Բայց ուրախ եղոյ անցնոյ շարժում իրաւունքի մէջ կարգաւորման հանրագործութիւնը որ ժողովուրդի կողմէ կուղղուի կեդրոնի երկու հատուածներուն, զանոնք հրաւիրելով որ պատգ. ընդհ. ժողովոյ գումարումը փութացնեն, իբր միակ միջոց ալ պառակտումը բուժելու։ Առաջ հատուածակերպի եւ առաջ կուսակցական ետաքրութեան խմբագրութեան այդ գործիւնը կարծէ որ ստորագրութիւնն իր իր հայերու կողմէ, որոնք կը զգան ու զգացած են աղգին աղետալի վիճակին դառնութիւնը։

Այդ հանրագործութեան տակ արդէն 300ի մօտ ստորագրութիւն հաւաքուած է քանի մը օրուան մէջ. բայց փափաքելի է որ տակաւին շատորագործներն ալ փութան հոն ստորագրել, որով հայ յիշափական կազմակերպութեանց ցանկալի միացումին զըլլա որ քայլը առնելու ստատարած պիտի ըլլան։ Այսչափ թեթեւ բայց կարեւոր պարտականութիւն մը կատարելու մէջ թերացողներ չեն գիտեր թէ իրեն հայ ինչ զգացում կրողներ ըլլալու են։

Նորին պէս փափաքելի է որ արտասահմանի ուրիշ հայաշատ քաղաքներ հետեւին վառարանի այս օրինակին։

Մ. ՀԱՄԱՐԱՐՁՈՒՄԵԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁՔ

ԱՒՍՏՐԻԱ ԵՒ ՌՈՒՍԻԱ

Պալատիան խնդիրներու մասին Ռուսիոյ եւ Աւստրո-Հունգարիոյ միջեւ 1897էն ի վեր գոյացած եւ վերջերս ամբաստանուած համաձայնութիւնը որ աշխարհի հանդիսաւորութեամբ յայտարարուեցաւ Վիեննայի եւ Մ. Բեռլինի դաշինքներէն պաշտօնական թերթերով, պահ մը չփութեան մէջ կը ձգէ մտքերը Միթրոփիցայի զէպին առթիւ։ Ռուս մամուլը որ խոտ գրաքննութեան մը եւ թակայ է աստորիական գաւազդութիւն մը կը տեսնէ այդ զէպին մէջ. եւ ուն արտաքին գործոց նախարարութեան բերանը համարուող կիսապաշտօնական Նովոյե Վրեյնիա մեծ օրաթերթը հրատարակեց Սթրասպէր ստացուած թղթակցութիւն մը որ կը հաստատէ թէ Աւստրիացի գործակալներ Արարչացոյցները գրգռած են Միթրոփիցայի վրայ յարձակիլ. ու կըսէ «յարձակողներուն մէջ կը գտնուէին մեծ թուով կաթոլիկ Արարչացոյցներ որոնք Աւստրիոյ գաղտնի պաշտպանութիւնը կը վստայէին նոյն թղթակցութիւնը կաւելցնէ թէ Սթրասպէր աստորիական հիւստոստարանի մէջ գործակալը շարունակաբար կը չրջագայի Միթրոփիցայի եւ Սթրասպէր շրջակաները դրամ բաժնելով Արարչացոյց եւ անոնց խոտանալով Աւստրիոյ պաշտպանութիւնը։ Վիեննայի մէջ դարմանք կը պատճառեն ու հետզհետէ զայրութի տեղի կուտան ուն մամուլին այս հրատարակութիւնները որոնք պարզապէս Աւստրիան գաւազդի հոգեկեղծ են։

Թը ունին։ Հետեւաբար կրտսի թէ աստոր-հունգարական կառավարութիւնը հաւաքած է իր Բեռլինայութիւնը զեպանին որ անմիջապէս բացատրութիւն պահանջէ ուն նախարարութիւնէն այդ հրատարակութեանց մասին եւ ճշդութիւն Նովոյե Վրեյնիա հրատարակ նետած այդ թղթակցութեան հետեւին մէջ ինչ աստիճան տեղ կը բռնէ։ Վիեննայի մէջ կը կարծուի թէ եթէ ուն կառավարութիւնը հերքում մը չտայ Նովոյե Վրեյնիա այդ ամբաստանութեանց զէմ, կընայ ծանր հետեւանքներ առաջ գալ երկու պետութեանց միջեւ։

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՖՐԱՆՍԻԱ

Ետուարտ թագաւորին ի մօտոյ Ֆրանսա այցելելու պարագայ շատ մը թերթերու երկար խորհրդածութիւններ ընելու կուտ բացած է։ Թագաւորին այցելութեան յետոյ, անշուշտ, Ֆրանս. Հանրապետութեան նախագահն ալ փոխադարձ այցելութեան պիտի երթայ։

Այս երկու պետութիւններու միջեւ քաղաքական ուժեղ կապ մը հաստատուելու պէտքը վերջին տարիներու մէջ աւելի անհրաժեշտ նկատուած է երկուքին համար։ Միայն թէ թէ Անգլիա Ֆրանսայի նման ուժեղ բարեկամ մը մը պէտք ունի գերմանական եւ ուսական ձգտողներուն զօրեղանք զիմագրուել կրնալու համար։ Ֆրանսա եւ գերմանական յոխորտանքներուն զէմ եւ անոր գաղթային տարածումը ու զէպի Տաճկաստան ձգտումները սահմանափակելու համար Անգլիոյ աջակցութիւնը անհրաժեշտութիւնը զգացած է։

Նաբոլէոն իսկ, թէեւ շատ ուշ, բայց վերջապէս խոտովանեցաւ թէ Անգլիան Ֆրանսայի թշնամի ընելով անգլիկ սխալ մը գործած էր, սխալ մը որ իր լաւաշխարհային պատճառ եղաւ։ Նորին պէս կը խոտովանին այսօր Ֆրանսացիք թէ Ֆրանսայի խնդրով Անգլիոյ հետ գոտութիւն առաջ բերելին սխալ մըն էր։ Կիմա այդ սխալները չտիկ եւ անցածը մոռցնել

Ա. ԵՐՏԱՆԵԱՆ

(69)

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԻՐ ՅԱՐԿԻՆ ՏԱԿ

ԹԻԱ ՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՎԱՆԱՑ ՁՈՁԸ

—Ներողութիւն, պէյ, յարեց Ներսէս Արծրունին հանդարտ բայց անկեղծ ձայնով մը. Կը զգամ թէ չափազանց տառապեցաք քանի մը ժամէ ի վեր. եւ կարծեցիք թէ կառավարութեան լրտեսի մը ծուղակն ինկաք։ Ասկիա փորձառութիւն մըն էր, որուն նպատակը նպատակաւոր պիտի ըլլայ ձեր տոնին բարձր անուան։ Մնաք բարով, պէյ։

Ու վերտոնին հանդիման զանապաղան համալը սրբեմը, ծածկեց ինքզինքը բոլորովին ու մեկնեցաւ։

—Ո՛հ, Աստուած իմ, մրմնջեց զոջը ինքնիւրեն, եթէ մեր անկախութեան անձնուրացները Ներսէս Արծրունիի պէս ըլլան, ո՞վ չը վստահիր... ո՞վ իր կեանքը, իր հարստութիւնը չը տար։ Իցի՛ւ թէ չար աչքէ հետեւ ըլլար...։

Անան ցուրտ ու ամպամած գլուխը մըն էր։ Հովը ծառերու չորացած տերեւները խլելով տանիքի քրտնալիւն կը զարնէր բրտօրէն եւ կընդհատէր գլուխուն խոր լուրթիւնը։

Այդ միջոցին Վանայ քաղքէն... ժամ հեռաւորութեամբ, գեղի մը մէջ մարդ մը կը մանէր ու շուններու յարձակումէն ազատելու համար՝ պարտեղներու կողմէն տանիքներու վրայ ելնելու կը ջանար։

Մարդը հոգնած կերեւաւ. այդ պատճառաւ խոտերու զէպին տակը, ապահով տեղ մը գտաւ ու նստեցաւ։ Բարձրահասակ էր ան. հաղիւ քսանութը տարու կար. յաղթանալով ու կորովի կազմուածք մը ունէր։

—Օ՛հ, Աստուած իմ, մրմնջեց երիտասարդը հոգեմանը հառաջանք մը հանելով իր բերքէն, ալ չեմ կրնար քալել... ալ ուժ չմնաց վրաս... Բայց պէտք է յառաջանալ, պէտք է լոյսը չծագած...։

Ու կարծես թէ խղճուեցաւ... Լեզունը զոզողաց ու հեծկլտուքը լեցուց իր կոկորդը։

Չը սպասեց... ոտքի ելաւ ու հեւքը խղճելով իր մէջ՝ կամաց կամաց յառաջացաւ։ Վերջապէս տանիքի մը ետեւաւորին վրայ կանգ առաւ, պահ մը չորաղին պտտուց իր աչքերը, յետոյ չուան մը հանելով իր ծոցէն մէկ ծայրը կոճղի մը, իսկ միւսը մէջքին կապեց ու վար իջաւ։ Առանց չընել մը ընելու, մօտեցաւ կուղի մը, որուն բարակ ճեղքուածներէն ճրագի մը աղօտ լոյսը կը պլլար։ Ա-

կանջ դրաւ։

Լալու՛ւ ձայն էր, կի՛ւն ոչ տխուր երգի մը, ոչ տուրին խորունկ մէկ անկիւնէն կուգար. չհասկըցաւ...։ Ատոր համար ականջը տարաւ ճեղքուածքներուն մօտ ու անա ինչ որ լսեց։

«Ուրուրոցիլ մօտն եմ նստել, սեւ մասմ»,
«Ումպը, Աստու՛ր, մու՛թ են ընծի, ինչ անեմ...»
Սիրտս կոտորած, հոգիս լիքաւ ու լեցուած
«Տաք արցունքներ թափում վրէժ քե՛» թերթմ.
«Տարտար որդի իմ տարտար»,
Քիւ մէրկեղ է պրնտար...։

«Ա՛խ, թող կապեմ քիւ պալուխնդ արտաքնքոտ,
«Ուր դիւ քընիս, շոտ մեծանաւ, զօրանա՛ւ»,
«Թուրիկ աչքիդ մէջմը փակէ, իմ խորտ»,
«Ենդճուկ մօրկանդ սնուչ ձէնիկը կիմանաւ»
Տարտար, անկալաւա, տարտար...
(կրկնել)

«Բանիմ, լացի՛ւ... վախ արտաքնքնութեանցի...
«Քիւ պալուխնդ եւ թընցի, միշտ լալով.
«Էլ ինչ անեմ, սպիւր քարիւր լացոյցի
«Աստուած փութ, սեւը մտայ եւ քեզմով...
«Տարտար մէկհատիկս, տարտար...
(կրկնել)

«Մեր երկիւրն էլ արնէն ծով դարձել է,
«Ժամ, պատ արագ, ախ, տուր վանքերն էլ չկան.
«Մեծցի՛ր որդի, շուտով կելի ու վազէ,
«Արնիքի տեղ, արունք ուղէ քիւ հօրկան.
Տարտար, սիրականս տարտար...
(կրկնել)

կը ջանան Թրանսպիր, ու շատ ար-
տակարգ պատերազմներով Եստուարտ թա-
գաւորը ընդունելու կը պատրաստ-
ուին :

Անգլիոյ եւ Թրանսպիր միջեւ ա-
ռաջ եկող այս մերձեցումը մեծ գեր-
ուսնի կատարելիք Արեւելեան խնդրոյ
վերաբերմամբ : Ներքին քաղաքական-
ներ շատ առիթներու մէջ բացատրած
են թէ Գերմանացու թուրքոյ մէջ
յառաջացումին ասպարէզ տուած է
Անգլիոյ եւ Թրանսպիր հակընդդէմ քա-
ղաքականութեան հետեւիլը : Եթէ այս
վերջինները 1891էն ի վեր համեմալիս
զորմէն Պոլսոյ մէջ, գերմանական
ազգայնականութիւնը հոն չպիտի ներգործէր,
եւ երկաթուղիի գաղթականներու մեծա-
շնորհները՝ որոնցմով այսօր գերմա-
նացիք Պոլսէն մինչեւ Պաղատա, ահա-
գին տարածութեան վրայ, տնտեսա-
պէս տիրապետել կը ձգտին, չպիտի
կրնային ձեռք ձգել : Իսկ մենք կա-
ւելցնենք թէ Սուլթանը չպիտի հա-
մարձակէր նաեւ հայկական ջարդերը
արտօնելու եթէ Թրանսպիր Անգլիոյ հա-
մեմալիս զիրք բռնած ըլլար :

ՆԱԽԱԿ ՌՈՒՍԱՃՈՒԲԷՆ

Ե... թերթի հրատարակու-
թիւնը բոլորովին սուտ է Պոլս.
Զիթեանի մասին : պաշտօնական
նամակներով բաժնի կրնամ հաս-
տատել :

Իրաւ է թէ տեղւոյ Նախա-
բեկները հոգաբարձութեան եւ
ընթերց. վարչութեան սպառնա-
կան նամակներ գրած էին : Ասոնք
այ ազգային երկու հաստատու-
թեանց շուրջը նոր խնդիրներ չի
յարուցանելու համար ուղեցին
գործը անուշի կապել. ու պաշ-
տօնական անձնակազմութիւններ ա-
ռաջարկեցին իրենց անձնակազ-
մակաւորները սրահ մը վարձել, ու
հրաւիրել այն տեղ տեսնախօսելու
Պ. Զիթեանը :

Նախաբեկներ խմբակին մէջ
չչուկ մը կը պտտուի թերթ մը
հիմնելու Պոլսեցի մէջ : Խնչպէս
կիմանամ այդ նոր թերթը չէզո-
քի գիտելիք տակ դուրս պիտի
գայ, բայց ճշշու Նախաբեկներ
ներսէն զեզը պիտի պաշտպանէ
եղիւր : Երբեք թէ այդ թերթը
վարձարի մէջ պիտի հրատարակ
ուի :

8 ապրիլ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կիլիկիոյ նորընտիր կաթողիկոս
Տ. Սահակ Սրբազանը վանքի
բարեկարգութեան վերաբերեալ
կարգադրութիւններ սկսած է ընել :
Ժախքերու եւ եկամուտներու առ-
ժամանակեայ մատակարար կար-
գած է Տ. Ղեկնիչ վրդ. Թուրքա-
գետներ : շէքերու նորոգութեանց
եւ վերաշինութեանց համար շին-
ուած ապեւ կարգած է Տ. Հրանտ
վրդ. Կարօտներ : Եւստիանոսով մը
կազմած է շորս վարդապետներէ
վանքին նիւթական վիճակը քննե-
լու եւ տեղեկագրելու թէ ինչ
պարտքեր ունին, ինչ գոյքեր կան :
Կարգ մը եկեղեցական հետիւթիւն-
ներ տարիներէ ի վեր անխնամ
մնալով փճանալու վիճակին հասեր
են : Իսկ վանքին եկամուտները
բոլորովին դադրած են : Նոր կա-
թողիկոսի ուսին կը ծանրանան
չատ մը ներքին գործեր, եւ ինք
այդ ամէնը կարգադրելու համար
օրինակելի ժրջանութիւն մը ցոյց
կուտայ, միեւնոյն տեսն օժման եւ
Միւսուի օգնութեան պատրաստ
տութիւնները կը տեսնէ :

— Սմանայն Հայոց վեհ. կա-

թողիկոսը՝ որ մտադիր էր Տփլի-
սէն Գիշնե երթալ, ուրս կառա-
վարութեան չէ արտօնուած եւ
ստիպուած է մարտ 27ին էջմիա-
ծին վերադառնալ :

Նիւպէս Բեգերապուրկէ տրուած
հրամանի մը համեմատ Ս. Էջմի-
ածիայ հիմնարկութեան 1600 աւ-
ելի հանդէսը գալ տարուան յի-
տնագումար է :

Իսկ Միւսուի օրհնութիւնը
յուշկիւր սեպտեմբեր 26ին պի-
տի կատարուի :

— Իշխան Արղիթեան Երկաթ-
նախազուկ իր մահուան տօնին 40000
բուլղի կուտկեր է, որպէսզի տո-
կոսովը 6էն 12 տարու ազգատ
տղաք կրթութիւն : Ուրս կրթական
պաշտօնատունը վարժարաններու
վարչութիւնը արդէն իր ձեռքը ա-
ռած ըլլալով այս գրամիւս ալ իւ-
րացնել ուզած է, որուն դէմ վեհ.
Կաթողիկոսը բողոքած է : Այս
խնդիրը դատարանի պիտի յանձ-
նուի :

— Սուլթանը իր անձնական
գանձէն Զատիկի առթիւ 25000
ղրուշ մը պատրիարքարանին եւ
10000 զրշ. Հայ Հռոմէական պատ-
րիարքարանին նուէր զրկած է :

— Զատիկի առաջին օրը շնոր-
հաւորական այցելութիւն տուած
են Պատրիարքին Պարսից գեսպա-
նը, Ալիլիոյ, Ռուսիոյ, Պելժիոյ,
Սերպիոյ եւ Հոլանտայի գեսպա-
նատանց թարգմանները՝ ի դիմաց
իրենց գեսպաններուն : Նաեւ Պուլ-
կարացի էկզարքը եւ Հայ-հռոմէա-
կանաց Պատրիարքը անձամբ պատ-
րիարքարան այցելած են : Ամեն
էկզարքը եկեղեցին եւս իջնելով
տաճարին նորոգութեան մասին
գործատալից խօսքեր ըրած է :

— Երբեք —

ԻՐԱՆԻԱՆԻՔ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Վառնա Տ. Ե. Բ. — Ուսուցիչներու
մասին ձեր գանգատը հրատարակել
տալէ առաջ հաճեցէք զայն Հոգաբար-
ձութեան հաղորդել :

— Ն. Չախուրա Տ. Ս. Դ. վեց ֆր. ր
ոտացած ենք :

— Վառնա Տ. Մ. Հայրապետեան :
Սաացա՞ք ձեր նամակը եւ յանձնե-
ցինք Պ. Ե. Բ. որ կարգայ : Խնդիրը
գոցուած կը նկատենք :

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Պատիւ ունիմ ծանուցանել Ռու-
մանիոյ եւ Պուլկարիոյ ազգայնոց թէ
որոշած եմ ամսոյս 18ին ճամբորդու-
թիւն մը ընելով այս երկու երկրներու
կարեւոր քաղաքները այցելել :
Հետո պիտի ունենամ շատ մը գրքեր :
այդ գրքերէն քննարկելու ընել փափա-
գովները կրնան այս առիթէն օգտուել
միայն թէ պէտք է գիտնալ որ իւրա-
քանչիւր քաղաք մէջմէկ օր միայն
պիտի կրնամ մնալ : ուստի ահապա-
րելու են զիս գտնել :

Կը գնեմ ու կը վաճառեմ ամէն
տեսակ նամակագրօյմ եւ հին գրամ-
ներ :

Ա. ԶԱՐԳԱՆԻՍԻԱՆ
Գրաւաճառ

ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ

Թերճանի Փիրիզ զեղէն Նիկողոս
Գրիգորեան անուն երիտասարդը Պուլ-
սոյ 1896ի դէպքին արտասանման ելած
ըլլալով, մինչեւ ցարդ իր հասցէն չէ
իմացուցած իր եղբոր ու ազգական-
ներուն : Ինք՝ որ այժմ 27 տարեկան
պիտի ըլլայ, սեւադէմ, սեւ յօնքե-
րով եւ հաստ չրթուքներով միջա-
հասակ երիտասարդ մըն է :

Կը խնդրուի որ իր հասցէն ով որ
գիտէ բարեհաճ խմբագրութեանս ի-
մացնել :

«Ա՛խ, ինչ օր է որ ես տեսնեմ, իմ խորտ,
«Երբ դիւ հեծնիս ձիւդ վրէժ քաջի պէս :
«Վազեա, երթա՛ս, «կուտի սարը...» արնքոտ,
«Տունդ քանդող թուրքեր չորսդին դիւ թափու :
«Տարտար, եթիմս, վա՛խ, տարտար :
(Կրկնել)
«Ձէ... չմեռնիմ... չիւմ քիւ ճակատը համբուրիմ,
«Երբ դիւ դառնաս ձորդ արնքոտ սարերէն :
«Մոցիս վրէժ մէկ մը գրկեմ ու սեղմեմ,
«Որ կարտովդ չբաժնուիմ «վաթանէն»...
«Տարտար, կարիճ իմ, տարտար
Քիւ մէրիկդ չէ՛ պրինտար...»

Երիտասարդը չէր համարձակել ձեռքը դուռին տա-
նելու, չէր համարձակել ձիւ մը հանելու, չէր հա-
մարձակել կիցած տեղէն անդամ շարժում մը ընե-
լու... Արցունքը՝ որ հեծկտուքներուն հետ խառ-
նուած էր, իր հոգին կը խզէր աւելի ուժգին ու
աւելի անդուռ թափով մը :

Գիշերուան մութին մէջ, ցուրտ ու խոնաւ մթն-
շողորտի մը տակ, ժամերով սպասելէ ետքը, մի-
քեանարար ձեռքը սողնակի ծակին տարաւ եւ փոր-
ձեց փականքը բանալու, բայց չը յաջողեցաւ, ո-
րովհետեւ կանգնէ կապուած էր դուռը :

Ի՞նչ ընէր... ձա՛ն տար, կի՛թ ո՛չ սպասէր :
Մտածեց...

Ա՛խ, սպասելու կարողութիւնը չէր մնացել վրան...
ոտքերը վը կի՛թուէին : Ուստի կամաց ձայնով մը
մրմնջեց :

— Հոբիսիմէ՛, Հոբիսիմէ՛...
Ու իր խղճուած ձայնին պատասխան մը առնելու

համար, դարձեալ ականջը մօտեցուց ճեղքուած ք-
նեւուն : Ան ատեն լսեց որ ոտքի շշուկ մը կուգար
սուսնին խորէն : Երիտասարդը յուզմունքով մը սպա-
սեց : Ուստի ձայնը երկիւղալի կերպով մը մօտեցաւ
դուռին, կեցաւ պահ մը եւ ձեռքին հողէ ճրագը
մէկ կողմը դրաւ :

— Ես եմ, Հոբիսիմէ՛, բա՛ց դուռը, կրկնեց երե-
տասարդը խղճուած ձայնով մը :

— Աստուածամա՛ր... բացապանչեց կամացի ձայն
մը ու ահապարանքով մը բացաւ դուռը :

Ո՛հ, կեանքի ամենէ՛ն քաղցր ու ամենէ՛ն նուր-
բական վայրկեաններէն մին էր այդ գոր երիտա-
սարդը զգաց՝ իր թուրքուն մէջ հեծկտացող էակի
մը կարտան առնելով :

— Սիրվա՛րդ... Սիրվա՛րդ... դուն հո՞ս... բացա-
պանչեց կի՛թը՝ գրեթէ խելալով վիճակի մը մէջ :

— Աստուած քու ազօթքներուդ ձայնը լսեց, Հը-
նիսիսիմէ՛ս, զողջողաց Սիրվա՛րդը՝ կնոջ ձեռքը կարտ-
տով մը իր ձեռքերուն մէջ սեղմելէ ետքը :

— Մայրս քնացա՞ծ է, Հոբիսիմէ՛, հարցուց Սի-
րվա՛րդ խղճուած շնչով մը :

— Մա՛յրդ... դողդողաց մանկամարդ կի՛նը :

Ու Ձը կրցաւ մէկէն ի մէկ պատասխանել : Վի-
րաւորուած եղնիկի մը պէս նայեցաւ իր սիրական
ամուսնոյն աչքերուն մէջ... :

— Ինչո՞ւ չես խօսիր... վրայ բերաւ Սիրվա՛րդ՝
հեծկտուքը զսպելով :

— Ո՛հ Սիրվա՛րդ, մայրդ սեւ օրերը քեզի տուաւ...
մրմնջեց մանկամարդ կի՛նը՝ անոր կուրծքին վրայ
խնայելով :

— Միւսո՞ւմ է... Աստուած իմ... բացապանչեց

Սիրվա՛րդ : Ուրեմն դուն մինակ ե՞ս տունին մէջ :

Ո՛չ, մի՛նակ չեմ, սիրելի՛ս, Աստուած ծաղիկ մը
տուած է մեզի, թո՛թովեց կի՛նն ու ահապարան-
քով մը նիւս վազեց եւ փոքրիկ հրեշտակ մը բերաւ :
Սիրվա՛րդ ինքն իրմէ ելած վիճակով մը ոտքի ելաւ
ու գրկին մէջ առաւ այդ հրեշտակը, որ հաղիւ վեց
ամսուան մը կար, եւ կուշտ մը համբուրեց :

Ահա՛ պզտիկդ ու ես մնացել ենք առնելիդ մէջ,
Սիրվա՛րդ, յարեց մանկամարդ կի՛նը գորովանքով
մը : Յերկը՝ միսթարութեան է ան, իսկ գիշերը՝
երգս : Բայց ո՞ւր է իր... ո՞ւր մնացիր : Խեղճ մայրդ
կարտովդ մնաւ : Բոլոր գեղը լուր տարածուեցաւ
թէ դուն մնաւ ես : Ախ, ուրիշ ամիս եղաւ որ տե-
ղեկութիւն մը չառնուեցաւ քնէ : Ձէ՞ որ Պարս-
կաստան պիտի երթայիր... :

— Այո՛, Հոբիսիմէ՛, պիտի կրթայիր... սակայն
սահմանադրուիլ կիցող թուրք զինուորները միգի
մադ դարձուցին :

— Ի՞նչ աղէկ... Աստուած իմ ձայնս կը լսէր
հարկաւ : Հապա ուրիշ ամիսներէ ի վեր ո՞ւր կըս-
պասէիր :

— Բուրսերու մէջ... :

— Բուրսերու մէջ... Ի՞նչու համար :

— Ի՞նչ ընեմ... վերադառնալով... այդ պատ-
ճառով ամիսներով քուրտի մը տանը մէջ պահուած
մնացի, մինչեւ որ վէրքս առողջացաւ :

(Շարունակելի)

Печатница Взаимность Варна.